

Դևոնդ Ալիշան

ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐԱՅՐԻ

Ո՞նց գաս, իմ լուսնակ, հեզիկ ու հանդարտ
Համասփյուռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եվ ի նահապետս, որ մըտոք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու աննըման հարք մեր հայկազունը
Ընկան զետ հըսկա, կանգնեցան զվարթունք.
Միթե գա՞ս սըփռել ոսկերաց սըրբոց
Ձյունափայլ ամպեդ ոսկեթել ծածկոց,
Թե ճերմակ ճակտիդ՝ թեպետ և պայծառ
Քաջացս արենեն կատե՞ս կարմիր վառ.
Թե լըռիկ-մընջիկ ափշի՞ս տակավին,
Թե ի՞նչպես ընկավ Վարդանն ահագին,
Մահու սև ըստվերն ի սիրտ թըշնամյաց,
Զհոգին ձրգելով յերկին առ աստված:
Դու այլ, ո՛վ Տըղմուտ, տըտում ու արյունոտ,
Որ լալով ոլրիս ի մեջ շամբերուդ.
Եվ հովիկդ, որ գաս ի Մակվա քարեն
Կամ ի ծեր Մասյաց սըրբազան սարեն.
Դու այլ ինձ նըման դողդող և երեր
Թույլ թևոք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառն անտառ, տերևն տերև
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Զայս մաշած շընչիս վերջին հառաչանք

Ձրգել ի Հայոց սրբտից արձագանք:
Ո՛հ դու բարեկամ այրած սրբտերու,
Խոսնակ գիշերո, հոգյակ վարգերու,
Երգե՛ պրլպուլիկդ, երգե՛ ի սարեդ,
Ջանմահ քաջքն Հայոց երգե՛ հոգվույս հետ.
Թադեի վանուց ձենիկդ ինձ դիպավ,
Սրբտիկս, որ ի խաչն էր կիպ, թունտ առավ.
Ի խաչին թենն թրռա ու հասա,
Գլտա զքեզ ի դաշտ քաջին Վարդանա:
Պրլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թե չէ հավ՝ պրլպուլ մեր Ավարայրին,
Եղիշյա հոգյակն է քաղցրագրուցիկ,
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ.
Ջրմենն յանապատ կու գնա կա ի լաց,
Գարունն յԱրտազ գա ի թուփ վարդենյաց,
Երգել ու կանչել յԵղիշեին ձայն
Թե պատասխանիկ մարգյոք տա Վարդան:
Թե կիսահոգի պրլպուլիս նրման
Ձենիկս հասնի ձեզ, որդի՜ք Թորգոմյան,
Որդի՜ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լըցուցին զդաշտեր, գրրքեր ու զերկինք.
Թե ի ծով սրտիդ կաթիլ մարունիկ
Կա թե Հայ աղբյուրըն կամ Պահլավիկ,
Թե զփառքն հայրենյաց ձեզ այլ գրրեք փառս,
Հետ նահապետիս ելեք ի յԱրտազ: